ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 4

ԳՅՈՒՏԵՐ 6

ՀԱՅՏԵՐ 6

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ 12

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ 15

ՀԱՅՏԵՐ 15

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ 17

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 18

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ, ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ 22

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ 23

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 24

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 24

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ 25

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 27

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 29

Հրատարակվում է Մտավոր սեփականության գրասենյակի կողմից

Խմբագրական կոլեգիա՝

Քրիստինե Համբարյան

Լիլյա Հակոբյան

Արփինե Եգանյան

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5/1

Հեռ. 011 597 534 հայտերի ընդունման բաժին

Հեռ. 011 597 535 տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և հրապարակումների բաժին

ՆԱԽԱԲԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

2025 թվականը Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության համակարգի համար եղել է զարգացման, արդիականացման, թվային վերափոխման և միջազգային ինտեգրման տարի: Մտավոր սեփականության գրասենյակը շարունակել է իրականացնել իր գործառույթները՝ ապահովելով մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանության տրամադրումը, նպաստելով գործարար միջավայրի մրցունակության բարձրացմանը և նորարարության խթանմանը:

Հաշվետու տարում Գրասենյակի գործունեությունը կենտրոնացած է եղել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրում ընդգրկված հետևյալ առաջնահերթությունների շուրջ՝

- Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարության ծրագրի մշակում, որն իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) փորձագետների հետ համատեղ
- Հայաստանի ամերիկյան համալսարանում Մտավոր սեփականության ուսումնական կենտրոնի հիմնադրում, որի լիարժեք գործարկումը նախատեսվում է 2026 թվականի 2-րդ կիսամյակից
- Գրասենյակի նոր տեղեկատվական համակարգերի նախագծման և ներդրման աշխատանքների իրականացում

2025 թվականին արձանագրվել է մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների ձեռքբերման հետաքրքրության շարունակական աճ: Ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը հասել է 3863-ի՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 6 տոկոսով: Հայտերի զգալի մասը ներկայացվել է ազգային հայտատուների կողմից, ինչը վկայում է տեղական գործարար համայնքի, տնտեսվարողների և ձեռնարկատիրության ակտիվության մասին:

ՆԱԽԱԲԱՆ

Անցնող տարում արձանագրվել է ակտիվություն նաև գյուտարարության ոլորտում: Ստացված 106 հայտերի զգալի մասը բաժին է ընկնում բժշկության, շինարարության և տրանսպորտի բնագավառներին:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նաև ծառայությունների թվայնացման գործընթացը: Ապրանքային նշանների գրանցման հայտերի ավելի քան 61%-ը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, ինչը վկայում է գրասենյակի կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության և հարմարավետության մասին: Միաժամանակ մեկնարկել է Գրասենյակի համար նոր տեղեկատվական համակարգի նախագծման և ներդրման գործընթացը, որը միտված է ժամանակակից, ինտեգրված և անվտանգ թվային միջավայր ստեղծելուն:

2025 թվականին շարունակվել է նաև մտավոր սեփականության ոլորտի ինստիտուցիոնալ զարգացումը: Կարևոր քայլ է հանդիսացել մտավոր սեփականության ազգային ուսումնական կենտրոնի ստեղծման գործընթացը, որը հիմնադրվել է Հայաստանի ամերիկյան համալսարանում և նախատեսվում է լիարժեք գործարկել 2026 թվականի 2-րդ կիսամյակից: Կենտրոնը նպատակ ունի զարգացնել ոլորտի մասնագիտական ներուժը և նպաստել մտավոր սեփականության կրթության տարածմանը Հայաստանում:

2025 թվականին իրականացվել են նաև իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված նախաձեռնություններ: Մասնավորապես՝ մշակվել և Կառավարություն է ներկայացվել օրենսդրական նախագծերի փաթեթ, որոնք միտված են համակարգի համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին:

Մշտապես կարևորելով մտավոր սեփականության ոլորտ նոր մասնագետների ներգրավումը և մասնագիտական գիտելիքների խորացումը՝ Գրասենյակը 2025 թվականին 2 անգամ անցկացրել է արտոնագրային հավատարմատարների որակավորման քննություններ (այսուհետ՝ «Քննություն»):

ՆԱԽԱԲԱՆ

Քննություններին մասնակցելու համար դիմում ներկայացրած 24 թեկնածուներից հաղթող են ճանաչվել 2-ը:

2025 թվականը ՄՍ համակարգի համար նշանավորվեց որպես միջազգային հարթակներում Հայաստանի ներկայացվածության և հեղինակության բարձրացման տարի: ՄՍՀԿ (WIPO) 66-րդ վեհաժողովների շրջանակում՝ Ժնևում՝ առաջին անգամ բացվեց Հայաստանի ազգային տաղավարը՝ աշխարհին ներկայացնելով մեր երկրի մշակութային ժառանգությունն ու ստեղծարար պոտենցիալը:

Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) հետ խորացված համագործակցության արդյունքում՝ Հայաստանը ընդգրկվել է «EU4IP» ծրագրում: Որպես «EU4IP» ծրագրի շահառու երկիր՝ Հայաստանը հնարավորություն կունենա իրականացնել ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ, հանդիպումներ, աշխատաժողովներ, ինչպես նաև օրենսդրական դաշտի բարեփոխումներ:

Ընդհանուր առմամբ, 2025 թվականը կարելի է բնութագրել որպես անցումային և հիմք ստեղծող տարի, որի ընթացքում ձևավորվել են մտավոր սեփականության համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ ռազմավարական, իրավական և տեխնոլոգիական նախադրյալները: Ձեռնարկված քայլերն ուղղված են արդյունավետ, թափանցիկ և ժամանակակից համակարգի կայացմանը, որը կհամապատասխանի ինչպես ազգային տնտեսության պահանջներին, այնպես էլ միջազգային զարգացման արդի միտումներին:

Վստահաբար՝ 2025 թվականին իրականացված ծրագրերն ու ձեռք բերված արդյունքները հիմք կծառայեն համակարգի հետագա ինստիտուցիոնալ ամրապնդման, նորարարական տնտեսության ձևավորման, տնտեսական աճի խթանման և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների իրագործման համար:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Մտավոր սեփականության գրասենյակը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող գրասենյակ է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ մտավոր սեփականության բնագավառում:

Գրասենյակը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գյուտերի, արդյունաբերական դիզայնների, ապրանքային և սպասարկման նշանների, աշխարհագրական նշումների, ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ընդունումն ու փորձաքննության անցկացումը, պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավունքների փոխանցման և օգտագործման իրավունքի ընձեռման՝ ֆրանչայզինգի, լիցենզային պայմանագրերի, այդ թվում՝ բաց լիցենզիաների գրանցումը:

Գրասենյակն իրականացնում է արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի փորձաքննության որոշումներին վերաբերող և արտոնագիր կամ վկայագիր տալու դեմ առարկությունների ու բողոքների քննարկումը:

Իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների մասին պաշտոնական տեղեկությունները Գրասենյակը նախապատրաստում և հրապարակում է իր պաշտոնական կայքէջում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ Գրասենյակը համագործակցում է նմանատիպ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ և կատարում է միջազգային պայմանագրերով ստանձնած իր պարտավորությունները:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գրասենյակի ղեկավար
Քրիստինե Համբարյան

Ապրանքային նշանների և աշխարհագրական նշումների փորձաքննության բաժին
Աննա Հայրապետյան



Գյուտերի և արդյունաբերական դիզայնների փորձաքննության բաժին
Ազնիվ Մխիթարյան

Պետական գրանցամատյանների բաժին
Արմենուհի Շահինյան

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բաժին
Արա Սմբատյան



Տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և հրապարակումների բաժին
Արփինե Եգանյան

Հայտերի ընդունման բաժին
Լիլյա Հակոբյան

Կազմակերպահրավական բաժին
Տաթևիկ Մովսիսյան

ԳՅՈՒՏԵՐ

ՀԱՅՏԵՐ

2025 թվականին Մտավոր սեփականության գրասենյակ է ներկայացվել 106 հայտ՝ 36 գյուտի արտոնագիր ստանալու հայտ (հայտերի ընդհանուր քանակի 33,96%-ը) և 70 գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտ (հայտերի ընդհանուր քանակի 66,04%-ը): Ներկայացված գյուտի արտոնագիր ստանալու հայտերից 27-ը ստացվել են ազգային հայտատուներից, իսկ 9-ը՝ օտարերկրյա հայտատուներից, այդ թվում՝ 5-ը PCT համակարգով ազգային փուլ փոխադրված հայտով: Գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտերից 69-ը ստացվել են ազգային հայտատուներից, այդ թվում՝ 1-ը PCT համակարգով ազգային փուլ փոխադրված հայտով, իսկ 1-ը օտարերկրյա հայտատուներից:

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 42 հայտ (հայտերի ընդհանուր քանակի 39,62%-ը):

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2022-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԳՅՈՒՏԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	71	66,98%
Իրավաբանական անձ, այդ թվում՝ Առևտրային կազմակերպություն ԲՈՒՀ կամ Գիտական հաստատություն	35 19 16	33,02% 17,93% 15,09%
Ընդամենը	**106**	**100%**

2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՄԵՆԱԱԿՏԻՎ ԳՅՈՒՏԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

№	Իրավաբանական անձի անվանումը	Ներկայացված հայտերի քանակը
1.	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	20
2.	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ	11
3.	Ֆիլիփ Մորիս փրոդաքթս Ս.Ա. (Շվեյցարիա)	8
4.	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	7
5-6.	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	4
5-6.	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	4

ԳՅՈՒՏԵՐ

2010-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԳՅՈՒՏԵՐԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄԵՐԺՎԱԾ/ՀԵՏ ԿԱՆՉՎԱԾ ՀԱՅՏԵՐ

Թվական	Քանակ	Հայտերի ընդհանուր քանակ	% ստացված հայտերի ընդհանուր քանակից
2010	30	187	16.04%
2011	27	188	14.36%
2012	35	182	19.23%
2013	40	172	23.25%
2014	66	181	36.46%
2015	29	170	17.05%
2016	37	126	29.37%
2017	25	150	16.67%
2018	16	141	11.35%
2019	26	153	17.00%
2020	23	99	23.23%
2021	27	109	24.77%
2022	34	118	28.81%
2023	28	112	25.00%
2024	21	96	21.88%
2025	25	106	23.58%

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով հրապարակվել է գյուտի արտոնագիր ստանալու 7 հայտ (2024թ.-ին՝ 4 հայտ):

2025թ.-ի ընթացքում Գրասենյակ ներկայացվել է ըստ էության փորձաքննության անցկացման 7 դիմում (2024թ.-ին՝ 2 դիմում):

2025 թվականին Գրասենյակը ստացել է 2 եվրասիական հայտ և սահմանված ժամկետում առաքել է այն Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2025 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 76 եվրասիական հայտ:

ԳՅՈՒՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 100 հայտով, ընդ որում՝ 2 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր տալու մասին, 73 հայտով կայացվել են որոշումներ գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալու մասին, 22 հայտով կայացվել են որոշումներ հայտը հետ կանչված համարելու մասին, 2 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր տալը մերժելու մասին և 1 հայտով կայացվել են որոշումներ գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալը մերժելու մասին:

Բացի այդ, 5 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր ստանալու հայտի հրապարակման մասին:

ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



ԳՅՈՒՏԵՐ

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը ընդհանուր թվի մեջ
1.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	16	15,09%
2.	Շինարարություն (E01-E06)	10	9,43%
3.	Տրանսպորտ (B60-B68)	9	8,49%
4.	Չափում և օպտիկա (G01-G03)	8	7,55%
5.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	7	6,60%
6-8.	Ճշգրիտ մեխանիկա, համակարգչային տեխնիկա, ազդանշանում (G04-G08)	6	5,66%
6-8.	Կենսաքիմիա, շաքար, կաշիներ (C12- C14)	6	5,66%
6-8.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	6	5,66%

9-10.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	5	4,72%
9-10.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	5	4,72%
11-12.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	4	3,77%
11-12.	Ֆիզիկական և քիմիական գործընթացներ (B01-B09)	4	3,77%
13-24.	Այլ բնագավառներ	20	18,87%
	Ընդամենը	**106**	**100%**

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	2023	2024	2025	Ընդհանուր թիվը (2023- 2025)	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	23	11	7	41	13,06%
2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	12	10	16	38	12,10%
3.	Շինարարություն (E01-E06)	10	5	10	25	7,96%
4-5.	Չափում և օպտիկա (G01-G03)	7	6	8	21	6,69%
4-5.	Տրանսպորտ (B60-B68)	6	6	9	21	6,69%
6	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	4	8	5	17	5,41%
7-9.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	11	0	4	15	4,78%
7-9.	Ճշգրիտ մեխանիկա, համակարգչային տեխնիկա, ազդանշանում (G04-G08)	3	6	6	15	4,78%

7-9.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	3	5	6	15	4,78%
10.	Կենսաքիմիա, շաքար, կաշիներ (C12- C14)	4	3	6	13	4,14%
11.	Ուսուցման միջոցներ (G09-G12)	3	8	1	12	3,82%
12.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	3	3	5	11	3,50%
13-14.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	6	3	0	9	2,86%
13-14.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	3	4	2	9	2,86%
15-16.	Օրգանական քիմիա (C07, A01N)	1	4	3	8	2,54%
15-16.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	2	5	1	8	2,54%
17.	Այլ բնագավառներ	15	12	17	44	14,01%
	Ընդամենը	**112**	**96**	**106**	**314**	**100%**

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2025 թվականին տրվել է 1 գյուտի արտոնագիր և 71 գյուտի կարճաժամկետ արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է 3 գյուտի կարճաժամկետ արտոնագիր (Ռուսաստանի Դաշնություն):

ԳՅՈՒՏԵՐ

ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2022-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



2025 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 3457 գյուտի արտոնագրից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 17–ը, իսկ գյուտի կարճաժամկետ 1000 արտոնագրից գործում են 213-ը։

ԳՅՈՒՏԵՐ

ԳՐԱՖԻԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ (2022-2025)



2025 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 9285 Եվրասիական արտոնագրեր։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ

ՀԱՅՏԵՐ

2025 թվականին ազգային ընթացակարգով Գրասենյակ ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 52 հայտ (2024 թվականին՝ 26 հայտ), դրանցից 50 հայտը ստացվել է ազգային հայտատուներից (2024 թվականին՝ 26 հայտ), իսկ 2 հայտը՝ օտարերկրյա (Կիպրոս, Բելոռուս)։

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 35 հայտ (2024 թվականին՝ 14 հայտ), ինչը կազմել է հայտերի ընդհանուր թվի 67,31%-ը։

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով հրապարակվել է արդյունաբերական դիզայնի 48 հայտ (2024 թվականին՝ 30 հայտ)։

Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 140 ծանուցում (319 արդյունաբերական դիզայնով) (2024 թվականին՝ 120 ծանուցում, 264 արդյունաբերական դիզայնով)։ Գրանցումները ներկայացվել են 18 երկրից (Շվեյցարիա՝ 86, ԱՄՆ՝ 10, Իտալիա՝ 6, Նիդերլանդներ՝ 5, Ռուսաստանի Դաշնություն՝ 5, Չինաստան՝ 5 և այլն)։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2022-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	16	30,77%
Իրավաբանական անձ	36	69,23%
Ընդամենը	**52**	**100%**

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԱԴՄԴ (ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ) ԴԱՍԵՐԻ ԲԵՐՎԱԾ ԵՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	ԱԴՄԴ դասը	Ներկայացված հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Փաթեթվածք, տարա և բեռնարկղեր, որոնք օգտագործվում են ապրանքների տեղափոխման կամ պահպանման համար (դաս 9)	20	38,46%
2-3.	Զարդարանքի իրեր (դաս 11)	4	7,69%
2-3.	Տրանսպորտային միջոցներ և բարձրացնող սարքեր (դաս 12)	4	7,69%

4-6.	Սննդամթերք (դաս 1)	3	5,77%
4-6.	Հագուստ, գալանտերեա (դաս 2)	3	5,77%
4-6.	Հրդեհային պաշտպանության սարքեր և սարքավորումներ, դժբախտ պատահարների կանխարգելման և կյանքի փրկության համար նախատեսված սարքեր և սարքավորումներ (դաս 29)	3	5,77%
7-17.	Այլ դասեր	15	28,85%
	Ընդամենը	**52**	**100%**

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2025 թվականի ընթացքում տրվել է 33 արդյունաբերական դիզայնի արտոնագիր (72 տարբերակով) (2024 թվականին՝ 27 արտոնագիր 74 տարբերակով), որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է 2 արդյունաբերական դիզայնի արտոնագիր (Կիպրոս, Բելոռուս):

2025 թվականի ընթացքում արդյունաբերական դիզայնների միջազգային գրանցման 141 (286 արդյունաբերական դիզայնով) ծանուցումների վերաբերյալ կայացվել է դրական որոշում (2024թ.-ին՝ 121 դրական որոշում (245 արդյունաբերական դիզայնով)):

2025 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 684 արդյունաբերական դիզայնի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում է 256 արտոնագիր:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

2025 թվականին ավելացել է Մտավոր սեփականության գրասենյակ ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը:

Ազգային ընթացակարգով ստացվել է 3863 հայտ, ինչը մոտ 6%-ով ավել է նախորդ տարվա համեմատ: Հայտերից 3112-ը ստացվել է ազգային հայտատուներից: Ապրանքային նշանների թվով 3842 հայտով կատարվել է փորձաքննություն, որի արդյունքում 1299 ապրանքային նշանների վերաբերյալ կայացվել է ապրանքային նշանը գրանցելու մասին որոշում: 2025 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 2545 ապրանքային նշանների վկայագրեր:

Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2885 ծանուցում:

Միջազգային ծանուցումներով կայացվել է 2006 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ:

2025 թվականին Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է 23 միջազգային գրանցման հայտ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը՝ 3863 հայտից 2378 հայտ ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որը կազմում է ներկայացված հայտերի քանակի 61.5 %-ը:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ



2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	3112		3112
AE	Արաբական Միացյալ Էմիր.	19	33	52
CH	Շվեյցարիայի Համադաշնություն	47	173	220
CN	Չինաստան	101	426	527
CY	Կիպրոս	4	43	47
DE	Գերմանիա	25	198	223
ES	Իսպանիա	8	48	56
FR	Ֆրանսիա	4	90	94
GB	Միացյալ Թագավորություն	25	92	117

GE	Վրաստան	27	12	39
HU	Հունգարիա	45	140	185
IN	Հնդկաստան	14	18	32
IR	Իրանի Իսլամական Հանրապետություն	3	17	20
IT	Իտալիա	3	164	167
JP	Ճապոնիա	30	27	57
KR	Կորեայի Հանրապետություն	32	70	102
RU	Ռուսաստանի Դաշնություն	79	463	542
USA	ԱՄՆ	161	130	291
Others (QA, KZ, UK, NL, FI, IE, PL, TR, HK, VG, IL, KY, MX, UZ, TW, MU, IQ, LV, JO, BR, AT, LK, BB, MY, VC, IM, SK, KW, SG, MK, EE, AU)		124	741	865
Ընդամենը		3863	2885	6748

2025 թվականին ըստ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի (ԱԾՄԴ) դասերի հայտարկված ապրանքային նշանների և ծառայությունների քառյակն ունի հետևյալ տեսքը:

- 1067 հայտով առաջատար դիրքում են ԱԾՄԴ **35-րդ դասի** (գովազդ. գործարարության կառավարում, կազմակերպում, վարչարարություն. գրասենյակային ծառայություններ) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները.
- 492 հայտով երկրորդ տեղում են ԱԾՄԴ-ի **43-րդ դասի** (սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները.

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

- 483 հայտով չորրորդ տեղում են ԱԾՄԴ-ի **41-րդ դասի** (կրթություն. ուսումնական գործընթացի ապահովում. զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները:
- 376 հայտով երրորդ տեղում են ԱԾՄԴ-ի **30-րդ դասի** (սուրճ, թեյ, կակաո և դրանց փոխարինիչներ. բրինձ, մակարոնեղեն և լապշա (արիշտա). տապիոկա և սագո. ալյուր և հացահատիկային մթերքներ. հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք. շոկոլադ. պաղպաղակ, շարբաթ և այլ սննդային սառույցներ. շաքար, մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, համեմանք, ամոքանք, պահածոյացված խոտաբույսեր. քացախ, սոուսներ և այլ համեմունքներ. սառույց (սառեցված ջուր)) ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները.



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականի ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ 235 գրավոր առարկություններ և դիտողություններ, ինչը մոտ 6%-ով պակաս է նախորդ տարվա համեմատ:

ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄՆԵՐ, ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

2025 թվականի ընթացքում գրանցվել է 2546 ապրանքային նշան, որոնց տրվել են ապրանքային նշանի վկայագրեր: 2025 թվականի ընթացքում երկարաձգվել է 1713 ապրանքային նշանների գործողության ժամկետներ:

Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 870 փոփոխություն և այլ գործողություններ:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են հետևյալ պայմանագրերը՝

1.	Ապրանքային նշանի իրավունքների փոխանցում	153
2.	Ապրանքային նշանի լիցենզիա	42
3.	Ապրանքային նշանի լիցենզիայի փոփոխություն	4
4.	Ապրանքային նշանի լիցենզիայի չեղյալ հայտարարում	2
5.	Ապրանքային նշանի ենթալիցենզիա	5
6.	Ապրանքային նշանի ենթալիցենզիայի փոփոխություն	7
7.	Ապրանքային նշանի ենթալիցենզիայի չեղյալ հայտարարում	2
8.	Ապրանքային նշանի ֆրանչայզինգ	1
9.	Ապրանքային նշանի ենթաֆրանչայզինգ	1
10.	Ապրանքային նշանի ենթաֆրանչայզինգի փոփոխություն	4
11.	Արտոնագրի իրավունքների փոխանցում	3
12.	Արտոնագրի լիցենզիայի չեղյալ հայտարարում	2
13.	Արտոնագրի լիցենզիայի փոփոխություն	1
14.	Արդյունաբերական դիզայնի իրավունքների փոխանցում	4
	Ընդամենը՝	231

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2025 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Գրասենյակի բողոքարկման խորհուրդ ներկայացվել է 24 ապրանքային նշանների վերաբերյալ բողոքներ: Ներկայացված բողոքներից 10-ը բողոքարկման խորհուրդը բավարարել է, իսկ 14-ի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2025թ.-ի ընթացքում Մտավոր սեփականության գրասենյակը 135 դատական գործերով մասնակցել է 230 դատական նիստերի:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2025 թվականին Մտավոր սեփականության գրասենյակի կողմից իրականացվել են բարեփոխումներ նաև իրավական դաշտում՝ նպատակ ունենալով համակարգը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին և լավագույն փորձին:

2025 թվականի ընթացքում ««Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը շրջանառվել են շահագրգիռ գերատեսչություններում, անցել են պետական-իրավական փորձաքննություն և արդեն ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարություն: Նախագծերը դրվել են նաև հանրային քննարկման:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները հիմնականում վերաբերում են կոլեկտիվ կառավարման համակարգի վերանայմանը և դրա արդյունավետության բարձրացմանը:

Առաջին կարևոր ուղղությունը կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հավատարմագրման համակարգի ներդրումն է: Պետական լիազոր մարմնի կողմից հավատարմագրվելուց հետո միայն կոլեկտիվ կառավարման կազմակերպությունները հնարավորություն կունենան իրենց գործունեությունն իրականացնել ոլորտում: Հավատարմագրման համակարգի ներդրումը կապահովի կենտրոնացված և վերահսկելի կառավարում: Պետական

լիազոր մարմնին վերապահվել է վերահսկողության իրավունք այդպիսի կազմակերպությունների գործունեության նկատմամբ:

Մյուս առանցքային փոփոխությունը վերաբերում է ընդլայնված կոլեկտիվ կառավարման մեխանիզմի ամրագրմանը: Նախագծով նախատեսվում է, որ հավատարմագրված կազմակերպությունը կարող է կառավարել նաև այն իրավատերերի գույքային իրավունքները, որոնք անհատական պայմանագիր չեն կնքել կազմակերպության հետ, սակայն գրավոր կերպով չեն հրաժարվել իրենց իրավունքների կառավարումից: Այս մոտեցումը կիրառվում է մի շարք երկրներում և դրա նպատակն է ապահովել համակարգի լիարժեք և արդյունավետ գործարկումը՝ հատկապես լայնածավալ օգտագործումների դեպքերում:

Հատուկ ուշադրություն է դարձվում տեխնիկական և էլեկտրոնային գործիքների, ծրագրերի կիրառմանը, որոնք կապահովեն օգտագործումների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատացված հավաքագրումը, իսկ այնուհետև դրանցից գոյացած հեղինակային վարձատրության արդարացի ու թափանցիկ բաշխումը: Նախատեսվել են կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող դրույթներ:

Նախատեսված փոփոխություններն ուղղված են իրավատերերի, ինչպես նաև օգտագործողների շրջանում կոլեկտիվ կառավարման համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը:

Կատարելագործվել են նաև հեղինակային իրավունքի պաշտպանության մեխանիզմները՝ սահմանելով հեղինակային ու հարակից իրավունքների խախտման համար հստակ փոխհատուցման չափեր՝ օրենքով սահմանված ֆիքսված փոխհատուցման հնարավորությամբ, իսկ օրենքի հիման վրա վարձատրության նվազագույն չափեր սահմանված լինելու դեպքում՝ դրանց կրկնակիի չափով փոխհատուցման կարգավորմամբ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2025 թվականին հրապարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 24 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են 72 գյուտի, 33 արդյունաբերական դիզայնի, 2546 ապրանքային նշանի մասին պաշտոնական տեղեկություններ, ընդգրկվել են նաև ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման, ինչպես նաև արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին տեղեկություններ:

2025 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների հայտեր» տեղեկագրի 24 համար: Իրականացվել է գյուտերի և կարճաժամկետ գյուտերի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական դիզայնների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին և գրադարաններին փոխանցելու, Գրասենյակի համակարգչային ցանցում ներքին օգտագործման, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2024 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Պատրաստվել և Գրասենյակի պաշտոնական կայքէջ են տեղադրվել տեղեկագրի էլեկտրոնային ձևերը:

2025 թվականին Մտավոր սեփականության գրասենյակը սկսել է թվային վերափոխմանն ուղղված ռազմավարական բարեփոխումների գործընթացը: Հիմնական նպատակն է մշակել և փուլային եղանակով ներդնել նոր, ինտեգրված և ժամանակակից թվային տեղեկատվական համակարգ, որը կբարձրացնի արդյունավետությունը, թափանցիկությունը, մատչելիությունը և տվյալների անվտանգությունը: Տվյալ տարվա աշխատանքները կրել են հիմնականում

պլանավորման, ռազմավարական ձևակերպման և կազմակերպական բնույթ և ուղղված են եղել համակարգի լիարժեք ներդրման հիմքերի ձևավորմանը:

2025 թվականին իրականացվել են համակարգի ներդրման ռազմավարական պլանավորման աշխատանքներ, մասնավորապես՝

- Սահմանվել են թվային վերափոխման հիմնական նպատակներն ու առաջնահերթությունները,
- Վերլուծվել են գործող գործընթացները և բացահայտվել թվայնացման ենթակա ուղղությունները,
- Նախանշվել է համակարգի ներդրման փուլային ժամանակացույցը,
- Ձևակերպվել են ակնկալվող արդյունքները և արդյունավետության ցուցանիշները

Մշակվել է նոր համակարգի տեխնիկական առաջադրանքը, որը ներառում է՝

- Համակարգի ֆունկցիոնալ պահանջների սահմանում
- Տվյալների կառավարման և պահպանման պահանջներ
- Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության չափանիշներ
- Ինտեգրման հնարավորություններ այլ պետական համակարգերի հետ
- Low-code / No-code տեխնոլոգիական հարթակի կիրառման հիմնավորում

Նախագիծը ներկայացվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 20-ի նիստում և արժանացել է հավանություն:

2025 թվականին մեկնարկել է նաև համակարգի մշակման նպատակով գնման գործընթացը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գրասենյակը շարունակել է ամրապնդել համագործակցությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների հետ: Համագործակցության հիմնական կարևոր ուղղությունը 2024 թվականին Գրասենյակի մասնագետների առկա և հեռավար մասնակցությունն էր տարբեր միջոցառումներին՝ համաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին, գործնական հանդիպումներին, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներին:

2025թ.-ի փետրվարի 6-ին Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) տրանսպորտի ապագայի վերաբերյալ տեխնոլոգիական միտումների զեկույցի մեկնարկի միջոցառմանը:

2025թ.-ի փետրվարի 18-20-ը Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Արտոնագրային համագործակցության պայմանագրի աշխատանքային խմբի 18-րդ հանդիպմանը:

2025թ.-ի փետրվարի 21-ին Գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) կողմից կազմակերպված «Օգտագործողի գրաֆիկական ինտերֆեյսի (GUI) դիզայնի պաշտպանություն» խորագրով առցանց հարթակում կազմակերպված տեղեկատվական նիստին:

2025թ.-ի փետրվարի 25-27-ը Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության

(ՄՄՀԿ) Միջազգային արտոնագրային դասակարգման հատուկ միության փորձագետների կոմիտեի 56-րդ նստաշրջանին:

2025թ.-ի մարտի 3-7-ը Գրասենյակի ներկայացուցիչներն առցանց մասնակցել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) Մտավոր սեփականության և գենետիկական ռեսուրսների, ավանդական գիտելիքների և բանահյուսության միջկառավարական հանձնաժողովի 50-րդ հանդիպմանը:

2025թ.-ի մարտի 10-12-ը կայացել է Եվրոպական հանձնաժողովի տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիքի՝ Թայեքսի (TAIEX) կողմից կազմակերպվող «Ստեղծագործական կենտրոնների կառուցվածքի և գործունեության մասին» թեմայով ուսումնական այցը Ֆինլանդիա, որի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցները այցելել են Հելսինկի քաղաքում գտնվող ամենամեծ մշակութային կենտրոն հանդիսացող «Kaapeli» գործարանը:

Ուսումնական այցի շրջանակներում Գրասենյակի աշխատակիցները այցելել են նաև Հելսինկիի «Oodi» կենտրոնական գրադարան, որտեղ տեղակայված են գերժամանակակից արհեստանոցներ՝ հագեցած այնպիսի սարքավորումներով, ինչպիսիք են լազերային և 3D տպիչներ, կարի մեքենաներ և այլ գործիքներ, որոնք կարող են օգտակար լինել արդյունաբերական դիզայնների ստեղծման և բրենդինգի զարգացման հետ կապված գործունեության համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական այցի շնորհիվ Գրասենյակի աշխատակիցները համապարփակ պատկերացում են կազմել ինչպես ստեղծագործական կենտրոնների կառուցվածքի և գործունեության, մտավոր սեփականության ոլորտի ստեղծագործական տարրերին աջակցող հանրային քաղաքականության մշակման հետ կապված մի շարք հարցերի, այնպես էլ արվեստի և մշակույթի հետ առնչություն ունեցող արդյունաբերական դիզայնների, իրավական պահպանության ենթակա ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների կրեատիվ և ինքնատիպ լուծումների մասին:

2025թ.-ի ապրիլի 29-30-ը Գրասենյակի ներկայացուցիչներն առցանց մասնակցել են Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) կողմից կազմակերպված Դիզայնի վերաբերյալ «Նորաձևություն և կայունություն» խորագրով աշխատաժողովին:

2025թ.-ի մայիսի 12-16-ը Գրասենյակի ներկայացուցիչներն առցանց մասնակցել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Միջազգային արտոնագրային դասակարգման հատուկ միության վերանայման հարցերով աշխատանքային խմբի 53-րդ նստաշրջանին:

2025թ.-ի մայիսի 13-15-ը Գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է Մարոկկոյի Թագավորության Մարաքեշ քաղաքում տեղի ունեցած «TRIPS@30. Հասանելիության ճգնաժամը» թեմայով Մտավոր սեփականության և դեղամիջոցների հասանելիության մասին համաշխարհային երրորդ գագաթնաժողովին: Գագաթնաժողովը կազմակերպվել է «Միջազգային բուժման պատրաստվածության կոալիցիա» հասարակական կազմակերպության

(International Treatment Preparedness Coalition (ITPC) NGO) և «Դարձնենք դեղամիջոցները մատչելի» (Make Medicines Affordable (MMA)) կազմակերպության ներկայացուցիչների կողմից:

2025թ.-ի մայիսի 19-23-ը Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Ծրագրերի և բյուջետային հանձնաժողովի 38-րդ նիստին:

2025 թվականի մայիսի 23-ին կայացել է «Մտավոր սեփականությունը որպես հայկական գինեգործության կայուն զարգացման շարժիչ ուժ» ծրագրի շահառուների ներգրավման միջոցառումը, որը կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Մտավոր սեփականության գրասենյակի և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (ՀԽԳՀ) համագործակցությամբ: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անուշիկ Ավետյանը, ՀՀ ԷՆ Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավար Քրիստինե Համբարյանը, ՀԽԳՀ գործադիր տնօրեն Զարուհի Մուրադյանը, ինչպես նաև ոլորտի այլ ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում քննարկվել են հայկական գինեգործության ոլորտի զարգացման և միջազգային շուկայում նրա դիրքի ամրապնդման, մտավոր սեփականությանը առնչվող մի շարք հարցեր, ինչպես նաև կայացել է պանելային քննարկում բրենդինգի և աշխարհագրական նշումների թեմաների շուրջ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025թ.-ի մայիսի 12-23-ը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում տեղի է ունեցել «Գյուտերի արտոնագրման Եվրասիական համակարգ. մեխանիկայի և ֆիզիկայի բնագավառում գյուտերի փորձաքննության գործնական հարցեր: Համակարգչային տեխնոլոգիաների և արհեստական բանականության ոլորտում լուծումների արտոնագրաունակությունը» խորագրով Եվրասիական արտոնագրային կոնվենցիային (ԵԱԿ) միացած պետությունների արտոնագրային գործակալությունների փորձագետ-մասնագետների ամենամյա վերապատրաստման դասընթացը, որին մասնակցել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցները:

Գործնական ուղղվածությամբ ուսումնական դասընթացի ընթացքում քննարկվել են «Գյուտերի արտոնագրման Եվրասիական համակարգ», «Գյուտերի փորձաքննության գործնական հարցեր մեխանիկայի և ֆիզիկայի բնագավառում» և «Արտոնագրաունակության որոշումը համակարգչային տեխնոլոգիաների և արհեստական բանականության բնագավառում» թեմաները:

Այս թեմաների քննարկման շրջանակներում մտավոր սեփականության գրասենյակի ներկայացուցիչները հանդես են եկել «Գյուտերի փորձաքննությունը Հայաստանում, գործնական օրինակներ» վերնագրով ելույթով (սահիկաշարով), ինչպես նաև մասնակցել են աշխատանքային փորձի փոխանակմանը վերաբերող կլոր-սեղան քննարկմանը: Առաջարկություններ արվեցին մտավոր սեփականությանը վերաբերող լավագույն փորձն ընդլայնել և

ներդնել եվրասիական տարածաշրջանի ազգային արտոնագրային գրասենյակներում, մեծացնել շփումները գործնական շրջանակներում՝ գյուտերի փորձաքննության բնագավառում:

2025 թվականի մայիսի 29-ին Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաքում «Աստանա» միջազգային ֆորումի հարթակում տեղի է ունեցել «Մտավոր սեփականությունը արհեստական բանականության դարաշրջանում» պանելային քննարկումը:

Քննարկմանը մասնակցել են Հայաստանի, Ֆրանսիայի, Չինաստանի, Մալայզիայի Հյուսիսային Մակեդոնիայի և մի շարք այլ երկրների պաշտոնական պատվիրակություններ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) նախագահը, Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ) նախագահը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տնտեսության և ֆինանսական քաղաքականության նախարարը:

Պանելային քննարկման ընթացքում տեղի է ունեցել մտքերի փոխանակում թվային տրանսֆորմացիայի պայմաններում՝ մտավոր սեփականության ապագայի ռազմավարական հարցերի, արհեստական բանականության կողմից ստեղծված ստեղծագործությունների հեղինակության և մի շարք այլ հարցերի շուրջ:

2025թ.-ի մայիսի 30-ից հունիսի 5-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում կայացել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Մտավոր սեփականության և գենետիկական

ռեսուրսների, ավանդական գիտելիքների և բանահյուսության միջկառավարական հանձնաժողովի (IGC/51) 51-րդ նստաշրջանը:

Հայաստանի Հանրապետության կողմից նստաշրջանին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի

ներկայացուցիչը՝ ակտիվ մասնակցելով քննարկումներին, որոնք նպատակ ունեին ամրապնդել միջազգային համագործակցությունը ավանդական գիտելիքների և գենետիկական ռեսուրսների պահպանության ոլորտում: Միջոցառման շրջանակում ՀՀ ներկայացուցիչը մի շարք ոչ ֆորմալ հանդիպումներ է ունեցել այլ երկրների պատվիրակների հետ՝ քննարկելով ՄՍ գործիքակազմի կիրառման հնարավորությունները ավանդական գիտելիքների ու գենետիկական ռեսուրսների պաշտպանության գործում:

Հանձնաժողովի նիստերի արդյունքում որոշում է կայացվել երկարաձգել հանձնաժողովի գործունեությունը ևս երկու տարով: Քննարկվել են նաև «Մտավոր սեփականության և գենետիկական ռեսուրսների, ինչպես նաև գենետիկական ռեսուրսների հետ կապված ավանդական գիտելիքների մասին» ՄՍՀԿ պայմանագրի փոփոխվող հոդվածները, որոնք ներկայացվել են հաստատման 2025թ. հուլիսին կայացած Գլխավոր համաժողովի հանդիպումներին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մայիսի 19-ից 30-ը Ռուսաստանի մտավոր սեփականության պետական ակադեմիայում կայացել է Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի (ԵԱԿ) անդամ պետությունների ազգային արտոնագրային մարմինների մասնագետների համար նախատեսված «Մտավոր սեփականություն. արտոնագրային գործ» խորագրով վերապատրաստման լրացուցիչ մասնագիտական ծրագրի ամփոփիչ սեսիան, որը կազմակերպվել էր Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱՊԿ) Եվրասիական արտոնագրային վարչության (ԵԱՊՎ) աջակցությամբ:

Ծրագրին մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցները: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր գրասենյակի մասնագետների հանդիպումը Ռուսաստանի մտավոր սեփականության պետական ակադեմիայի առաջին և երրորդ կուրսերի ուսանողների հետ, որի ընթացքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում գյուտերի և արդյունաբերական դիզայնների արտոնագրման առանձնահատկությունները:

2025թ.-ի հունիսի 12-13-ը Գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է Եվրասիական արտոնագրային հավատարմատարների ասամբլեայի կողմից Եվրասիական արտոնագրային գերատեսչության աջակցությամբ կազմակերպված երկրորդ միջազգային համաժողովին, որի ընթացքում հանդես է եկել «Արդյունաբերական դիզայնի արտոնագրման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով զեկույցով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025թ.-ի հունիսի 16-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում մեկնարկել է «Մտավոր սեփականության վերջին զարգացումները և ուսուցման առաջադեմ մեթոդաբանությունները» խորագրով երկրորդ հնգօրյա վերապատրաստման դասընթացը՝ նախատեսված Հայաստանի մտավոր սեփականության ազգային ուսումնական կենտրոնի ապագա դասընթացավարների համար:

Դասընթացը կազմակերպել են ՀՀ ԷՆ մտավոր սեփականության գրասենյակը, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության ակադեմիան և Հայաստանի ամերիկյան համալսարանի շարունակական կրթության բաժինը համատեղ:

ՀՀ մտավոր սեփականության ազգային ուսումնական կենտրոնի հիմնադրումը մեկնարկել է 2023թ.-ի աշնանը՝ ՄՍՀԿ ակադեմիայի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի միջև կնքված հուշագրի հիման վրա: Մեկնարկից ի վեր ՄՍՀԿ ակադեմիայի դասախոսական կազմի կողմից անցկացվել է պլանավորված երկու վերապատրաստման դասընթացներից առաջինը՝ հեռավար ձևաչափով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի և «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի միջև համագործակցության մասին ստորագրված հուշագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ազգային ուսումնական կենտրոնը կգործի Հայաստանի ամերիկյան համալսարանում:

2026 թվականի առաջին կիսամյակում նախատեսվում է ազգային ուսումնական կենտրոնի պաշտոնական հիմնադրումը Հայաստանի ամերիկյան համալսարանի

Բաց կրթության բաժնի շրջանակներում՝ որպես մտավոր սեփականության ուսուցման ծրագիր:

2025թ.-ի հունիսի 16-20-ը Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Ծրագրերի և բյուջետային հանձնաժողովի 39-րդ նիստին:

2025թ.-ի հուլիսի 9-ին՝ Ժնևում, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) 66-րդ Վեհաժողովների շրջանակում, հանդիսավորությամբ բացվել է Հայաստանի տաղավարը, որի նպատակն էր միջազգային հարթակում ընդգծել երկրի մշակութային և ստեղծարար ներուժը:

Բացման արարողությանը մասնակցել են ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դերեն Թանգը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, ՄՍՀԿ անդամ պետությունների պատվիրակները, Շվեյցարիայի Համադաշնությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանը, մի շարք օտարերկրյա դեսպաններ, ինչպես նաև մշակութային և դիվանագիտական համայնքի այլ ներկայացուցիչներ:

Բացման խոսքերով հանդես են եկել ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դերեն Թանգը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը:

Տաղավարում ներկայացվել են հայկական ավանդական արհեստների լավագույն նմուշները՝ ասեղնագործություն, գորգագործություն, կավագործություն, մանրանկարչություն, ինչպես նաև ժողովրդական արվեստի այլ տեսակներ, որոնք

ներկայացնում են սերունդների միջև ստեղծագործական ժառանգության պահպանման և փոխանցման կենդանի գործընթացը:

Ցուցադրության շրջանակում կազմակերպվել էր նաև հայկական ավանդական երաժշտության և պարի ներկայացում, ինչը հավելյալ շունչ էր հաղորդում ազգային տաղավարին՝ թույլ տալով այցելուներին ամբողջական պատկերացում կազմել հայկական մշակութային ինքնության մասին: Միջոցառման հյուրերը հնարավորություն են ունեցել համտեսել հայկական խոհանոցի ավանդական ուտեստները:

Հայաստանի տաղավարը գործել է ՄՄՀԿ համաժողովների ամբողջ ընթացքում՝ դառնալով մշակութային երկխոսության, համագործակցության և ազգային ինքնության արժևորման հարթակ:

2025թ.-ի հուլիսի 9-ին, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) անդամ երկրների Ասամբլեաների 66-րդ հանդիպումների շրջանակում, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավար Քրիստինե Համբարյանի գլխավորությամբ հանդիպում է ունեցել ՄՄՀԿ անցումային և զարգացած երկրների բաժնի տնօրեն Հաբիպ Ասանի հետ:

Քննարկման ընթացքում կողմերը անդրադարձել են մտավոր սեփականության ոլորտում երկկողմ համագործակցության ընթացիկ իրավիճակին և հնարավոր զարգացումներին:

Քննարկվել են նաև երկկողմ համագործակցության հնարավոր ուղղությունները, այդ թվում՝ մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունը:

Մասնավորապես, անդրադարձ է եղել Երևանում կայանալիք հեղինակային իրավունքի թեմայով սեմինարի կազմակերպման ընթացքին և Հայաստանի հետ այդ ուղղությամբ համագործակցության հեռանկարներին:

Կողմերը կարևորել են նման ձևաչափով փոխգործակցությունը՝ տեղական կարողությունների զարգացման և միջազգային փորձի փոխանակման նպատակով:

2025թ.-ի հուլիսի 10-ին՝ Ժնևում՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) Գլխավոր վեհաժողովների շրջանակում, տեղի է ունեցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակի և Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) պատվիրակությունների պաշտոնական հանդիպումը:

Կողմերը քննարկել են համագործակցության խորացման ուղիները՝ ընդգծելով իրավական կարգավորումների արդիականացման, փորձի փոխանակման և կարողությունների զարգացման կարևորությունը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև 2024–2027 թվականներին իրականացվող EUIPO-ի աջակցության ծրագրին, որի նպատակն է ամրապնդել գործընկեր երկրների կարողությունները մտավոր սեփականության ոլորտում: Ծրագիրը ներառում է՝ ուսուցողական այցեր և վերապատրաստումներ, փորձի փոխանակման հարթակներ, օրենսդրական խորհրդատվություն, ինստիտուցիոնալ համագործակցություն:

EUIPO-ն բարձր է գնահատել ՀՀ Մտավոր սեփականության գրասենյակի նախաձեռնողականությունն ու ներգրավվածությունը ծրագրում՝ առաջարկելով մեկնարկել համագործակցությունը Հայաստանի հետ, և կազմակերպել համատեղ աշխատաժողով Երևանում:

Կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ խորացնել համագործակցությունը և համատեղ քայլերով նպաստել մտավոր սեփականության ոլորտի ամրապնդմանը:

2025 թվականի հուլիսի 14-ին՝ Ժնևում, Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի պատվիրակությունը՝ գրասենյակի ղեկավար Քրիստինե Համբարյանի գլխավորությամբ, հանդիպել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Հեղինակային իրավունքի կառավարման բաժնի պետի պաշտոնակատար Միյուկի Մոնրոյգի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարման վերաբերյալ սեմինարի կազմակերպման հարցերը: Սեմինարն անցկացվել է այս տարվա աշնանը՝ Երևանում՝ ՄՍՀԿ և մի շարք արտասահմանյան փորձագետների մասնակցությամբ:

2025 թվականի հուլիսի 15-ին՝ Ժնևում, Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) իրավակիրառման քաղաքականության բաժնի ղեկավարի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում իրավակիրառ մարմինների կարողությունների բարելավման և վերապատրաստման կարիքները՝ մտավոր սեփականության իրավախախտումների կանխարգելման և արդյունավետ լուծման նպատակով: Հանդիպման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ 2026 թվականի առաջին կեսին Երևանում կազմակերպվել է մասնագիտական

աշխատաժողով՝ փորձի փոխանակման և իրավակիրառ լավագույն պրակտիկաների ու մեխանիզմների ներկայացման համար:

2025 թվականի հուլիսի 16-ին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) կենտրոնակայանում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում՝ ՄՄՀԿ աշխարհագրական նշումների բաժնի ղեկավարի և Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի պատվիրակության միջև, որը գլխավորել է գրասենյակի ղեկավարը: Քննարկումները կենտրոնացած են եղել աշխարհագրական նշումների շուրջ, որոնք Հայաստանի համար մտավոր սեփականության առաջնահերթ ոլորտներից են: Կողմերը անդրադարձել են հայկական ավանդական արտադրանքների միջազգային ճանաչելիության բարձրացմանը, ինչպես նաև ոլորտում փորձի փոխանակման և տեխնիկական աջակցության հնարավորություններին:

Կողմերը շեշտել են շարունակական համագործակցության կարևորությունը՝ ուղղված տեղական արտադրողների շահերի պաշտպանությանը միջազգային մակարդակով:

2025թ.-ի հուլիսի 30-ին և 31-ին՝ Երևանում, կայացել է «Արժեքի բացահայտում. Մտավոր սեփականությունը՝ որպես հայկական գինեգործության կայուն զարգացման շարժիչ ուժ» վերապատրաստման և մենթորության ծրագիրը, որը կազմակերպվել էր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ), ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակի և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն էր աջակցել Հայաստանի գինեգործներին՝ արդյունավետ կիրառելու բրենդավորման, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների և որակի վերահսկման գործիքները՝ միջազգային շուկայում մրցունակ և պաշտպանված լինելու համար:

Մասնակիցներն ստացել են ինչպես խմբային, այնպես էլ անհատական խորհրդատվություն՝ ուղղված գինեգործական գործունեությունում մտավոր սեփականության կիրառման հստակ քայլերի ձևակերպմանը:

2025թ.-ի հուլիսի 22-ից օգոստոսի 7-ը Չինաստանի Ժողովրդական

Հանրապետության Պեկին և Դալյան քաղաքներում կայացել է «Չինաստանի և Հայաստանի միջև թվային տնտեսության զարգացում» խորագրով սեմինար-դասընթացը, որը կազմակերպվել էր ՉԺՀ առևտրի նախարարության Միջազգային բիզնես պաշտոնյաների ակադեմիայի (AIBO) նախաձեռնությամբ: Սեմինարն իրականացվել է Չինաստանի կառավարության կողմից՝ մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում երկկողմ համագործակցության ծրագրերի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունից սեմինարին մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները, այդ թվում՝ Մտավոր սեփականության գրասենյակի ներկայացուցիչը: Դասընթացի շրջանակում ներկայացվել են թվային

տնտեսության զարգացման ուղղությամբ Չինաստանի փորձը, միջազգային համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև թվային տեխնոլոգիաների կիրառման մեթոդները տնտեսության, առևտրի և կառավարման ոլորտներում:

Մասնակիցները հնարավորություն են ունեցել այցելելու Չինաստանի առաջատար տեխնոլոգիական և արտադրական կազմակերպություններ, ծանոթանալու դրանց գործունեությանը, ապրանքատեսականուն, ինչպես նաև միջազգային շուկաներում արտահանման փորձին: Դասընթացի ծրագրում ընդգրկված են եղել նաև ճանաչողական այցեր մշակութային և պատմական վայրեր, թանգարաններ և արդյունաբերական կենտրոններ:

Դասընթացի արդյունքներով ընդգծվել է, որ առաջադեմ թվային տեխնոլոգիաների և նորարարական գործիքների կիրառումը կարող է զգալիորեն բարձրացնել մտավոր սեփականության պաշտպանության արդյունավետությունը, արագացնել իրավակիրառ գործընթացները և նպաստել անբարեխիղճ գործունեության բացահայտմանը: Մասնակցության ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու փորձը զգալիորեն կնպաստեն Հայաստանում թվային տնտեսության, մասնավորապես՝ ՄՍ ոլորտին առնչվող տեխնոլոգիական կարողությունների զարգացմանը:

2025թ.-ի օգոստոսի 21-ին Գրասենյակի ներկայացուցիչները տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել են Եվրասիական արտոնագրային գրասենյակի կողմից կազմակերպված «Եվրասիական տարածաշրջանում

արդյունաբերական նմուշների իրավական պահպանության տրամադրման ընթացակարգերը» խորագրով վեբինարին, որի ընթացքում ներկայացվել է զեկույց «Արդյունաբերական նմուշներին իրավական պաշտպանության տրամադրման ընթացակարգը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

2025թ.-ի սեպտեմբերի 10-ին Գրասենյակի ներկայացուցիչը առցանց մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիային առընթեր մտավոր սեփականության հարցերով խորհրդատվական կոմիտեի տասնհինգերորդ նիստին:

2025թ.-ի սեպտեմբերի 17-ին կայացել է առցանց հանդիպում Մտավոր սեփականության գրասենյակի ներկայացուցիչների, ԵՄ Մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) և «Եվրոպական միությունը մտավոր սեփականության համար» (EU4IP) ծրագրի ներկայացուցիչների միջև:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի միացումը EU4IP ծրագրին, համագործակցության հնարավոր ուղղությունները, ինչպես նաև ծրագրի պաշտոնական մեկնարկին նվիրված միջոցառման կազմակերպումը Երևանում՝ EUIPO ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ավարտվել է IP4Apps Bootcamp միջազգային եռօրյա ինտենսիվ դասընթացը, որը կազմակերպվել էր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի և ՀՊՏՀ-ի համագործակցությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրն ուղղված էր երիտասարդ ծրագրավորողների և ուսանողների կարողությունների զարգացմանը՝ մտավոր սեփականության պաշտպանության և բջջային հավելվածների մշակման ոլորտներում: Դասընթացը վարել է ՄՄՀԿ կողմից ներկայացված փորձագետ, Բարսելոնայի համալսարանի պրոֆեսոր Մալքոլմ Բեյնը:

Դասընթացի երեք օրերի ընթացքում ուսանողները մասնակցել են ինտերակտիվ քննարկումներին, թիմային աշխատանքներին, խաղային վիկտորինաներին և իրական օրինակների ուսումնասիրությանը՝ խորացնելով իրենց գիտելիքները հեղինակային իրավունքի, ապրանքային նշանների, արտոնագրերի, արդյունաբերական դիզայնների պաշտպանության առանձնահատկությունների ոլորտում: Ծրագիրն ուսանողներին հնարավորություն է տվել գնահատելու մտավոր սեփականության դերը նորարարական նախագծերում, ինչպես նաև դրա կիրառական նշանակությունը ժամանակակից թվային և գործարար միջավայրերում:

Միջոցառման ավարտին ուսանողները ստացել են ՀՊՏՀ–ՄՄՀԿ–ՄՄԳ համատեղ հավաստագրեր և հնարավորություն մասնակցելու IPplication Project մրցույթին՝ մտավոր սեփականության թեմայով ուսուցողական հավելված մշակելու նպատակով: Մրցույթի լավագույն երեք մասնակիցները կհրավիրվեն Ժնև՝ այցելելու ՄՄՀԿ կենտրոնական գրասենյակ՝ մասնակցելու թեմատիկ հանդիպումների և ծանոթանալու կազմակերպության գործունեությանը:

2025թ.-ի հոկտեմբերի 6-7-ը տեսակոնֆերանսի ձևաչափով Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում անցկացված «Անտիկոնտրաֆակտ-2025» 13-րդ միջազգային համաժողովին:

2025թ.-ի հոկտեմբերի 6-8-ը Գրասենյակի ներկայացուցիչներն առցանց մասնակցել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման Հաագայի

համակարգի իրավական զարգացման աշխատանքային խմբի 14-րդ նստաշրջանին:

2025թ.-ի հոկտեմբերի 20-22-ը Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման հատուկ միության փորձագետների կոմիտեի 70-րդ հանդիպմանը:

2025թ.-ի հոկտեմբերի 27-31-ը Գրասենյակի ներկայացուցիչն առցանց մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Արտոնագրային միջազգային դասակարգման հատուկ միության վերանայման աշխատանքային խմբի 56-րդ նստաշրջանին:

2025թ.-ի նոյեմբերի 6-ին Գրասենյակի ներկայացուցիչներն առցանց մասնակցել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) կողմից կազմակերպված «Դիզայնի պաշտպանության 100 տարի. Արդյունաբերական դիզայնի գրանցման վերաբերյալ Հաագայի համաձայնագրի վերաբերյալ սիմպոզիում» խորագրով կոնֆերանսին:

2025 թվականի ընթացքում Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են Եվրասիական արտոնագրային գրասենյակի և Ռուսաստանի Մտավոր սեփականության պետական ակադեմիայի կողմից համատեղ կազմակերպված ամենամյա վերապատրաստման դասընթացներին՝ «Մտավոր սեփականություն, Արտոնագրային գիտություն» թեմայով:

2025 թվականի ընթացքում Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են առցանց ձևաչափով կայացած (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից նախապատրաստված)՝ ԵԱՏՄ անդամ պետությունների լիազոր մարմինների և հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգի նախագծի քննարկումներին:

2025թ.-ի նոյեմբերի 11-ից 12-ը Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակը (European Union Intellectual Property Office (EUIPO))

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի հետ համատեղ անցկացրել է փաստահավաք առաքելություն (fact-finding mission): Այն իրականացվել է Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «EU4IP» ծրագրի շրջանակներում:

Այցի շրջանակներում Հայաստան էին ժամանել Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի ներկայացուցիչները: Այցի նպատակն էր իրականացնել փաստահավաք առաքելություն՝ հանդիպելով և համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ, անցկացնելով քննարկումներ ՄՍ ոլորտի համար պատասխանատու կամ ՄՍ հարցերում ընդգրկված գերատեսչությունների հետ՝ պարզելու ոլորտի առաջնահերթություններն ու կարիքները: Քննարկումների արդյունքում կազմվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «EU4IP» ծրագրի տարեկան երկրորդ աշխատանքային պլանը, որի նպատակն է ամրապնդել ՄՍ իրավունքները Հայաստանում:

2025թ.-ի նոյեմբերի 20-ից 21-ը Իսպանիայի Թագավորության Ալիկանտե քաղաքում Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակը (European Union Intellectual Property Office (EUIPO)) Եվրոպական միության հետ համատեղ անցկացրել է Հեղինակային իրավունքի վերաբերյալ համաժողով, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարը և գրասենյակի աշխատակիցները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համաժողովի ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հեղինակային իրավունքը թվային դարաշրջանում, մշակութային և ստեղծագործական ոլորտների ներկայացուցիչների համար նախատեսված աջակցության ծրագրեր և կրթական նախաձեռնություններ, ինչպես նաև հեղինակային իրավունքի առցանց խախտումների արդյունավետ լուծումները: Համաժողովի ընթացքում կայացել է EUIPO-ի Հեղինակային իրավունքի կրթական կենտրոնի պաշտոնական բացումը, որը հեղինակային իրավունքի պաշտպանության և իրազեկվածության բարձրացմանն ուղղված նախաձեռնություն է:

Ալիկանտե քաղաք այցելության գլխավոր նպատակներից էր ՄՍ Գրասենյակի և Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարների հանդիպումը՝ քննարկելու երկկողմ համագործակցության ուղիները, որը ապագայում ավելի կամրապնդվի շնորհիվ Հայաստանի Հանրապետության՝ վերջերս EU4IP նախագծին ընդգրկվելուն: Նախագծի նպատակն է ամրապնդել ՄՍ իրավունքները Հայաստանում:

Համաժողովի շրջանակներում համաձայնություն է ձեռք բերվել Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) գործադիր տնօրեն Ժոաո Նեգրաոյի հետ նրա՝ 2026թ.-ին Հայաստան այցելության շուրջ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025թ.-ի նոյեմբերի 26-ից 27-ը Երևան քաղաքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) հետ համատեղ կազմակերպել էր հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների գործունեությանը նվիրված աշխատաժողով: Աշխատաժողովին որպես բանախոսներ հանդես են եկել ՄՍՀԿ ներկայացուցիչներ, ոլորտի մասնագետներ եվրոպական տարբեր երկրներից, Հայաստանի Հանրապետության կառույցների ներկայացուցիչներ: Մասնակիցների շարքում էին շահագրգիռ պետական կառույցների, մասնագիտական համայնքի և հասարակական սեկտորի ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ՄՍՀԿ-ի ծառայությունները կոլեկտիվ կառավարման ոլորտում, լիցենզավորման, հավաքագրման և բաշխման արդյունավետ փորձը, հեղինակային իրավունքի ենթակառուցվածքը, թվային դարաշրջանում իրավունքների կոլեկտիվ կառավարման մարտահրավերներն ու հնարավորությունները, հեղինակային վարձատրության սահմանման արդյունավետ փորձը և կառավարության կողմից իրականացվող վերահսկողության և մշտադիտարկման արդյունավետ փորձը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատաժողովին բացման խոսքով հանդես են եկել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ տիկին Անուշիկ Ավետյանը և Մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարը: Որպես բանախոսներ հանդես են եկել ՄՍՀԿ ներկայացուցիչը, Հեղինակների և կոմպոզիտորների ընկերությունների միջազգային կոնֆեդերացիայի (CISAC) տարածաշրջանային ղեկավարը, հունգարական «Արտիսիուս» (“Artisjus”) կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործադիր տնօրենը, Լեհաստանի «Զաիքս» (“ZAiKS”) հեղինակների միության և առաջատար կոլեկտիվ կառավարման կազմակերպության, ինչպես նաև ՀՀ մասնագիտական համայնքի ներկայացուցիչներ:

2025թ.-ի դեկտեմբերի 5-ին Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում կայացել է մտավոր սեփականության և տեխնոլոգիաների վերաբերյալ «IP Եվրասիա/IP Ղազախստան 2025» չորրորդ միջազգային համաժողովը: Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարն առցանց հանդես է եկել բացման խոսքով՝ ընդգծելով ՄՍ ոլորտում միջազգային համագործակցության զարգացման կարևորությունը և նորարարությունների դերը ժամանակակից տնտեսության մեջ: Համաժողովը նվիրված էր դեղագործական և բժշկական արդյունաբերությունների նորարարական ներուժի զարգացմանը, ինչպես նաև եվրասիական տարածաշրջանում մտավոր սեփականության ոլորտի վրա արհեստական բանականության գործիքների զարգացման ազդեցությանը: Միջոցառմանը

մասնակցել են արտոնագրային գրասենյակների ղեկավարներ, դեղագործական ընկերությունների ներկայացուցիչներ և առաջատար մասնագետներ:

2025թ.-ի դեկտեմբերի 15-ին առցանց անցկացվել է EU4IP նախագծի ղեկավար կոմիտեի երկրորդ նախագծային նիստը (PSC): Նիստի ընթացքում մասնակիցներին հնարավորություն է տրվել վերանայել առաջին աշխատանքային պլանի (WP1) արդյունքները, ինչպես նաև քննարկել և հաստատել երկրորդ աշխատանքային պլանի (WP2) առաջնահերթությունները: Նիստին մասնակցել են Գրասենյակի ղեկավարը և ներկայացուցիչը:

Հայաստանի Հանրապետության Մտավոր սեփականության գրասենյակը վերջերս վերսկսել է համագործակցություն Եվրոպական միության Մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) հետ՝ միանալով EU4IP ծրագրին: Ծրագրի հիմնական նպատակը շահառու երկրներում՝ Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ իրավակիրառման խթանումն է, ինչպես նաև գրանցման և պաշտպանության համակարգերի կատարելագործումը:

Հայաստանի մասնակցությունը նիստին առանձնակի կարևորություն ուներ: Քննարկման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել երկրորդ աշխատանքային պլանով նախատեսված բոլոր միջոցառումները՝ հաշվի առնելով 2025թ.-ի նոյեմբերին EUIPO-ի ներկայացուցիչների կողմից Հայաստան իրականացված փաստահավաք առաքելության ընթացքում վերհանված ոլորտային խնդիրները և առաջնահերթությունները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 23-ին Երևանում տեղի է ունեցել հանդիպում Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսանողների և ներկայացուցիչների հետ՝ նվիրված «Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի արդյունավետ օգտագործումը» թեմայի քննարկմանը։

Հանդիպման ընթացքում Մտավոր սեփականության գրասենյակի աշխատակիցը ներկայացրել է Գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները և մանրամասն անդրադարձել հեղինակային իրավունքի հարցերին, դրանց կիրառման առանձնահատկություններին կրթական և գիտական գործունեության շրջանակներում, ինչպես նաև դրանց խախտման համար նախատեսված պատասխանատվությանը։

Հանդիպումը կարևոր նշանակություն է ունեցել մտավոր սեփականության ոլորտում ընդհանուր գիտելիքների տրամադրման և կրթական ոլորտում հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի արդյունավետ օգտագործման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման տեսանկյունից։